Չարենցավանի համայնքապետ
պարոն Հ.Շահգալդյանին
նույն քաղաքի բնակիչ
Հրայր Փարսադանյանից

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Շահգալդյան, 7 տարի առաջ՝ 2015 թվականին սեպտեմբերին, արժևորելով ազգային միտքը, գաղափարախոսությունն ու մշակույթը, ձեռնամուխ եմ եղել ստեղծելու <<ԱՆԴՈԿ>> ավանդական երգի-պարի խումբը, որը մինչև այսօր ծավալում է ակտիվ գործունեություն թե՛ Չարենցավան համայնքում, թե՛ Չարենցավան համայնքից դուրս:

Մեկ տարի առաջ հիմնեցինք <<ԱՆԴՈԿ>> մշակույթի կենտրոնը, որտեղ ուսուցանվում է պրոֆեսիոնալ մակարդակով՝ որպես ազգային կրթություն, կավագործություն, քանդակագործություն, խաչքարագիտություն:Թվարկված մշակութային ճյուղերը չկան Չարենցավան համայնքում, իսկ եթե կան ՝ միայն սիրողական մակարդակով:Կավագործության ճյուղը զարգացնելով՝ մենք կկարողանանք զարգացնել նաև մյուս ճյուղերը, որովհետև նրանք ուղիղ կապ ունեն իրար հետ:

Ուստի խնդրում ենք Ձեր աջակցությունը համայնքում անչափ գեղեցիկ ու կարևոր մշակութային ճյուղի՝ կավագործության ճյուղի զարգացմանը:Մեկ տարի աշխատելով և ոչ պակաս հաջողություններ գրանցելուց հետո այսօր կանգնել ենք կավագործության գործիք (ԴՈՒՐԳ) ունենալու խնդրի առաջ:Վերջինս պարտադիր է ուսման այս փուլի համար: Ակնկալում ենք Ձեր ֆինանսական աջակցությունը:

Հարգանքներով Հրայր Փարսադանյան

ԱՁ՝ ՀՐԱՅՐ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ ՎԱՀԻԿԻ
Հասցե՝ 6-րդ թաղամաս, 19-րդ շենք, 33 բնակարան:ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԿՈՏԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՎՀՀ՝40606028
ՀՀ 1510002314734791

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է «05» 05 2022թ.
Մտից N 1870 Գործ N 04